ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025 թվականի
Մարտի 12-ին կայացած գիտական խորհրդի նիստի (նիստ հ.6)

Օրակարգ՝

1. 2024-2025 ուստարվա հեռակա ուսուցման առաջին կիսամյակի քննությունների արդյունքների ամփոփում /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/
2. Պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնը համալրելու և տվյալ պաշտոնի գիտամանկավարժական գործունեության տեսակները սահմանելու մասին նախագծի քննարկում /զեկ.՝ ամբիոնի վարիչներ/
3. Տպագրության երաշխավորման հարց /Սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի վարիչ Գ.Շավերդյանի «Հոգեթերապիայի հիմունքներ» աշխատության հայերեն տարբերակը/
4. Գիտաժողովի երաշխավորման հարցը / զեկ.Մոսինյան/
5. Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամի Անհատական դրամաշնորհների (Fellowships) ծրագրերի մասին / զեկ.՝ Հովնանյան/
6. Ընթացիկ հարցեր։

1. Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամի Անհատական դրամաշնորհների (Fellowships) ծրագրերի մասին զեկույցով հանդես եկավ տ-ն Հովնանյանը։ Ներկայացվեցին՝
   - Միջոցառման տեսակները,
   - Ովքեր կարող են դիմել,
   - Միջոցառումների հիմնական նպատակը
   - Վերջնաժամկետները
   - Ընտրության չափանիշները
   - Դիմելու օրինակը կայքում

Ավարտին հնչեցին հարցեր և պատասխաններ։

2. Ա.Բաղդասարյանը ամփոփեց 2024-2025 ուստարվա հեռակա ուսուցման առաջին կիսամյակի քննությունների արդյունքները։ 5-րդ կուրսում 24 հոգուց 15-ը տարբեր առարկաներից, ստացել են անբավարար։ Միաժամանակ նշեց, որ 6 հոգի առկա ուսուցմամբ ուսանողները ներկայացվել են հեռացման։

3. Ա.Բաղդասարյանը նշեց, որ պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնը համալրելու և տվյալ պաշտոնի գիտամանկավարժական գործունեության տեսակները սահմանելու մասին նախագծի քննարկումը պետք է իրականացվեր ԵՊՀ մեծ գիտխորհրդին։ Սակայն որոշվեց այն քննարկել ֆակուլտետներում։

4. Տպագրության երաշխավորվեց Սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի վարիչ Գ.Շավերդյանի «Հոգեթերապիայի հիմունքներ» աշխատությունը /հայերեն տարբերակը/։

5. Գիտաժողովի երաշխավորման հարց։
Դ.Մոսինյանը ներկայացրեց «Պատմության տեսության և փիլիսոփայության» լաբորատորիայի կողմից կազմակերպվող գիտաժողովի վերաբերյալ տեղեկություններ։ Նշեց նաև, որ ֆինանսավորման համար դիմել են Գիտությունների Ազգային Ակադեմիայի ֆոնդին։
Ա.Բաղդասարյանը տեղեկացրեց նաև, որ Ընդհանուր հոգեբանության ամբիոնը հոկտեմբերի 10-ից 12-ը կազմակերպում է հոբելյանական գիտաժողով, իսկ Նոյեմբերի 20-ին կկայանա փիլիսոփայության օրվան նվիրված գիտաժողով։

6. Ընթացիկ հարցեր։

- Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ Դ.Սարգսյանը հայտ է ներկայացրել թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու համար։ Հայտը երաշխավորվել է։
- Քննարկվեց հոգեբանության գ/հ կենտրոնի զարգացման և բարելավման 2026թ-ի հայտը։ Հ.Ավանեսյանը նշեց, որ բյուջեն հաստատված է։
- Ֆակուլտետը պետք է ներկայացնի 2 թեկնածու «Հանրային աղմուկ» քննարկումներին մասնակցելու նպատակով։ Մասնակիցների հարցը քննարկվում է։

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ.Պապոյան